

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

30.08.2013թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 53 անդամներից ներկա էին 37-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2013-2014 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում:
2. Մագիստրոսական պլանների հաստատում:
3. Գործող ուսումնական պլանների մասնակի փոփոխությունների մասին:

Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Ֆ. Գրիգորյան

4. Ընթացիկ հարցեր:

4.1. ԳՊՄԻ-ի ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգում փոփոխություն կատարելու մասին:

4.2. ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական կրթության բաժնում նոր հաստիքի ստեղծման մասին:

Հաղ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Ֆ. Գրիգորյան

4.3. ԳՊՄԻ-ի որակի ապահովման և վերահսկման գիտական խորհրդի մշտական հանձնաժողովի կազմի համալրման մասին:

Հաղ.՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր Վ. Ֆ. Գրիգորյան

4.4. ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի հոսքային դասարանների ձևավորման և առկա ժամաքանակի մասին:

Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի
տնօրեն Մ. Կարապետյան

4.5. ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2012-2013 ուստարվա հաշվետվություն:

Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի

Ռեկտոր Վ. Ֆ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 37 անդամներ. կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1. ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2013-2014 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման հարցը (**Ձեկ.**՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Ֆ. Գրիգորյան):

Ռեկտորը ներկայացրեց նոր ուսումնական տարվա I կիսամյակի ամիսների կտրվածքով գիտական խորհրդի քննարկման ենթակա հարցերի բովանդակությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ինստիտուտի գիտական խորհրդի 2013-2014 ուստարվա I կիսամյակի աշխատանքային պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 37 անդամներ. կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ.- Մագիստրոսական պլանների հաստատման հարցը (**Ձեկ.**՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Ֆ. Գրիգորյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, պրոռեկտոր Ս. Սողոյանը, պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Ե. Վարդանյանը, փիլիսոփայության և հասարակագիտության ամբիոնի վարիչ Հ. Հարոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել մագիստրոսական պլանները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 37 անդամներ. կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.ԼՍԵՑԻՆ.- Գործող ուսումնական պլանների մասնակի փոփոխությունների մասին (**Ձեկ.**՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Ֆ. Գրիգորյան):

ԳՊՄԻ-ի ռեկտորը ներկայացրեց հարցի վերաբերյալ բուհի ֆակուլտետների դեկանների կողմից ներկայացված ելակետային առաջարկությունները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ֆիզմաթ ֆակուլտետի դեկան Ս. Մարգարյանը, բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի դեկան Ա. Գրիգորյանը, պատմաբանասիրական ֆակուլտետի դեկան Ս. Հայրապետյանը, օտար լեզուների ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Մելքոնյանը, մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանը, ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստականության /ՆԶՊ/ ֆակուլտետի դեկան Ա. Մաթևոսյանը, Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, պատմության, իրավագիտության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Ե. Վարդանյանը, կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դոցենտ Կ. Պետրոսյանը, ուսանողական խորհրդի նախագահ Հ. Տոնապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել գործող ուսումնական պլաններում կատարված մասնակի փոփոխությունները:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 37 անդամներ. կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

4.1 ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգում փոփոխություն կատարելու մասին (**Հաղ.**՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Ֆ. Գրիգորյան):

Առաջարկվեց ԳՊՄԻ-ի ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգի 2.3. կետի վերամշակված հետևյալ տարբերակը. «Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցում են պրոֆեսոր (գիտությունների դոկտոր) կամ գիտությունների թեկնածուի, դոցենտի գիտական աստիճան, կոչում ունեցող անձինք: Ամբիոնի վարիչի մրցույթին կարող են մասնակցել գիտությունների դոկտոր և պրոֆեսոր՝ մինչև 70 տարեկան, ՀՀ ԳԱԱ թղթակից և իսկական

անդամները՝ մինչև 75 տարեկան: Թեկնածուների բացակայության կամ առաջին մրցույթից հետո, ամբիոնի վարիչի պաշտոնը թափուր մնալու դեպքում, մեկ ամսվա ընթացքում հայտարարվում է կրկնակի մրցույթ, որին կարող են մասնակցել նաև գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք: Պաշտոնատեղի հավակնորդները պետք է ունենան առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձ»:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել՝ ԳՊՄԻ-ի ամբիոնների վարիչների ընտրությունների ընթացակարգը (հաստատված ԳՊՄԻ-ի 26.05.2012թ. գիտական խորհրդի թիվ 09 նիստում) նոր խմբագրությամբ:

4.2 ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական կրթության բաժնում նոր հաստիքի ստեղծման մասին (**Հաղ.**՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր, պրոֆեսոր Վ. Ֆ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով ԳՊՄԻ-ի միջին մասնագիտական կրթության բաժնի վարիչ Վ. Ա. Այվազյանի սույն թվականի օգոստոսի 29-ի դիմումը՝ ինստիտուտի միջին մասնագիտական կրթության բաժնում ստեղծել «Վարիչի տեղակալ դաստիարակության գծով» հաստիքը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 37 անդամներ. կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.3 ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի որակի ապահովման և վերահսկման գիտական խորհրդի մշտական հանձնաժողովի կազմի համալրման մասին (**Հաղ.**՝ ԳՊՄԻ-ի ռեկտոր Վ. Գրիգորյան):

Վ. Գրիգորյանը նշեց, որ ԳՊՄԻ-ի որակի ապահովման և վերահսկման գիտական խորհրդի մշտական հանձնաժողովի կազմում աշխատում են Ս. Սարգսյանը, Ե. Վարդանյանը, Հ. Դրմեյանը, Լ. Մարտիրոսյանը, Թ. Մելիքյանը և Հ. Մելքոնյանը: Հաշվի առնելով հանձնաժողովի աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ անհրաժեշտ է համալրել նրա կազմը ևս 1 անդամով: Նա առաջարկեց տնտեսագիտության ամբիոնի վարիչ Թ. Սիմոնյանի թեկնածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը, ֆիզիկայի, տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Հ. Դրմեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել տնտեսագիտության ամբիոնի վարիչ Թ. Սիմոնյանի անդամակցությունը ԳՊՄԻ-ի որակի ապահովման և վերահսկման գիտական խորհրդի մշտական հանձնաժողովին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 37 անդամներ. կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.4 ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի հոսքային դասարանների ձևավորման և առկա ժամաքանակի մասին (**Ձեկ.**՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյան):

Մ. Կարապետյանը նշեց, որ 2013-2014 ուստարում ԳՊՄԻ-ի ավագ դպրոց դիմել է 16 աշակերտ: Ընդ որում, բոլորն էլ դիմել են հումանիտար հոսք: Տեղեկացրեց նաև, որ ընդհանուր հոսքի 11-րդ դասարան փոխադրված աշակերտների ծնողները ներկայացրել են դիմում՝ վերաբերող իրենց երեխաների հոսքի՝ ֆիզմաթ կամ կենսաքիմիա փոփոխմանը: Համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում կարելի է նշված դասարանների հոսքը փոխել բնագիտամաթեմատիկականի՝ ֆիզմաթ ու կենսաքիմիա ենթահոսքերով: Մ. Կարապետյանի համոզմամբ՝ ուսումնական գործընթացը կարելի է կազմակերպել այնպես, որ հոսքային առարկաներն ուսումնասիրվեն առանձին, մինչդեռ ընդհանուր հանրակրթական առարկաները՝ միասին: Ծնողների դիմումներին ընդառաջելու դեպքում ԳՊՄԻ-ի ավագ դպրոցում 2013-2014 ուստարում կգործի 4 դասարան. 1 հումանիտար հոսքի 10-րդ դասարան, 2 հումանիտար հոսքի 11-րդ դասարան, 1 բնագիտամաթեմատիկական հոսքի 11-րդ դասարան՝ ֆիզմաթ ու կենսաքիմիա ենթահոսքերով: Այս պարագայում դպրոցում առկա կլինի 159.5 ժամ /մոտավորապես 7,25 դրույք/:

Ռուսաց լեզու- 7 ժամ

Հայոց լեզու և հայ գրականություն – 24 ժամ /11 ժամ հ.լ., 13 ժամ հայ գրակ./

Անգլերեն – 18 ժամ

Ֆրանսերեն – 6 ժամ

Ինֆորմատիկա – 5 ժամ

Մաթեմատիկա -23.5 ժամ /14.5 հանրահաշիվ, 9 ժամ երկր./

Ֆիզիկա -8 ժամ

Հայոց պատմություն – 16 ժամ

Հայ եկեղեցու պատմ. – 3 ժամ

Համաշխարհ. պատմություն – 4 ժամ

Աշխարհագրություն – 5 ժամ

Հասարակագիտություն – 7.5 ժամ

Կենսաբանություն – 9 ժամ

Քիմիա – 7.5 ժամ

Ֆիզկուլտուրա – 12 ժամ

ՆԶՊ – 4 ժամ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.2013-2014 ուստարում ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 10-րդ դասարանում ձևավորել 1 հումանիտար հոսքային դասարան:

2.ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 11-րդ ընդհանուր հոսքային դասարանը վերափոխել բնագիտամաթեմատիկական հոսքի՝ կազմված ֆիզմաթ ու կենսաքիմիա ենթահոսքերից:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 37 անդամներ. կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4.5 ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2012-2013 ուստարվա հաշվետվություն (Զեկ.՝ ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի տնօրեն Մ. Կարապետյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի ավագ դպրոցի 2012-2013 ուստարվա հաշվետվությունը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 37 անդամներ. կողմ՝ 37, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նախագահ՝

Վ. Գրիգորյան

Քարտուղար՝

Թ. Խաչատրյան